

ՀԱՅ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿԸ

(ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ղանալանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ)

Լրացավ հայ արդի գրականագիտության ու բանագիտության նախաձեռնող հեղինակություններից ու անխոնջ մշակներից մեկի, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-



անդամ, գիտության վաստակավոր գործիչ Արամ Տիգրանի Ղանալանյանի ծննդյան 60-ամյակը:

Անվանի գիտնականը ծնվել է 1909 թվականի փետրվարի 12-ին, Ախալցխայում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի և Թիֆլիսի դպրոցներում: 1931 թ. ավարտելով Երևանի պետական համալսարանը և ապա մի կարճ ժամանակ պաշտոնավարելով Երևանի միջնակարգ դպրոցներում, որպես հայոց լեզվի և գրականության դասատու, Ա. Ղանալանյանն այնուհետև իրեն նվիրում է հայ ժողովրդական բանահյուսության հավաքման, հետազոտման ու հրապարակման գործին, սկզբում աշխատակցելով, իսկ այնուհետև փոխարինելով ականավոր հայագետ Մանուկ Աբեղյանին, որի սիրելի աշակերտն ու մտերիմ բարեկամը լինելու բախտ է ունեցել:

1932—1943 թվականը Ա. Ղանալանյանն աշ-

խատել է Հայաստանի նյութական կուլտուրայի պատմության, կուլտուրայի պատմության, պատմության և գրականության, Արմֆանի լեզվի և գրականության ինստիտուտներում, որպես գիտաշխատող, իսկ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնադրման օրից մինչև այժմ՝ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, ուր 1943—1959 թվականը ղեկավարել է ժողովրդական բանահյուսության բաժինը: Մեր այժմյան բոլոր շնորհալի բանագետները ասպիրանտական դասընթաց են անցել Ա. Ղանալանյանի ղեկավարությամբ:

Անցած շուրջ 40 տարիների ընթացքում գիտնականը լույս է բնծայել բազմաթիվ մեծ ու փոքր մենագրություններ, որոնք նվիրված են հայ բանահյուսական նյութերի ուսումնասիրությանն ու հրապարակմանը, բանահյուսության և գրականության փոխհարաբերությունների լուսաբանմանը և բանագիտության պատմության ու տեսության խնդիրներին:

Բանահյուսական նյութերի հրատարակման և ուսումնասիրության ուղղությամբ Ա. Ղանալանյանի կատարած աշխատանքի մեջ առանձնապես պետք է նշել «Հայ շինականի աշխատանքի երգերը» (1937), «Հայկական առածանի» (2 հրատարակություն, 1951, 1960) և «Հայ ժողովրդական ավանդությունները» (1969) կապիտալ գործերը, որոնք իրենց նախորդը

չունեն հայ բանագիտության մեջ և լուրջ ավանդ են հանդիսանում հայագիտության բնագավառում: Նշված հետազոտություններում Ա. Ղանալանյանը ցուցաբերել է բանահյուսության պատմա-հանաչողական նշանակության խոր ըմբռնում, տեսական մեծ ընդհանրացումներ կատարելու նախանձեղի կարողություն, գիտական անհանգիստ ու որոնող միտք և ժողովրդական բանահյուսության հուշարձանները հրատարակելու մեծ հմտություն:

Գիտնականի այդ հատկությունները երևան են եկել նաև բանահյուսության ու գրականության փոխհարաբերության հարցերին նվիրված ուսումնասիրություններում. «Այալար-Նովայի ըստեղծագործության ժողովրդական ակունքները»

(1963), «Արժեքներ և ժողովրդական բանաձևություններ» (1941), «Ավ. Խանակյանի ըստեղծագործության ժողովրդական ակունքները» (1955) և այլ աշխատություններում մերժողաբանական նիշող դիրքերից և փաստական հաշուետու նյութի հիման վրա ցույց է տրված այն խոշոր դերը, որ խաղացել է բանահյուսությունը վերահիշյալ ականավոր գրողների ստեղծագործությունների առաջավոր զարգացման ձևավորման ու արվեստի կատարելության գործում:

Գիտական մեծ նշանակություն ունի Ա. Ղանալանյանի «Ժողովրդական բանահյուսության մի լանդի հարցեր» (1954) ուսումնասիրությունը, որ նվիրված է բանահյուսության պատմության ու տեսության պրոբլեմներին: Ժողովրդական բանահյուսության յուրահատկությունների բազմակողմանի ու խոր մեկնաբանությամբ այդ աշխատությունն իր նմանը չունի հայ (և ոչ միայն հայ) ժամանակակից և առհասարակ բանագիտության մեջ:

Հայ բանագիտության համար մեծ նշանակություն ունի Ա. Ղանալանյանի «Սասունցի Դավիթ», «Ջրիկ» մեծագույն փոփոխական հետազոտությունները, «Հայ ժողովրդական հեքիաթները» ժողովածուի տեխստն ու ներածականը, հայ ժողովրդական էպոսի «Դավիթ և Խանդավազ» և «Փոփոխ Մհեր» նյութերի համահավաք բնագրերը, «Մ. Արեղյանն իբրև ֆոլկլորիստ», «Լենին փաշա հերոսական սամբ», «Հայ սովետական ֆոլկլոր» աշխատությունները և Հայկական հեքիաթի մանկավարժական ինստիտուտի հրատարակությամբ լույս տեսած՝ «Հայ ժողովրդական բանահյուսություն» պրակները (1945—1946), որոնցից յուրաքանչյուրը մի նոր խոսք է հայ բանագիտության մեջ: Հիշենք նաև, որ ուսուցիչն է ուսումնական լեզուներով լույս են տեսել գիտական կազմած «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուն՝ ներածությամբ հանդերձ, իսկ ֆրանսերեն լեզվով՝ հայկական առածների հեղինակը գրավոր աղբյուրներին նվիրված ուսումնասիրությունը և այլն: Ա. Ղանալանյանը ակադեմիկոս Մ. Արեղյանի երկերի գիտական հրատարակության նախաձեռնողներից ու խմբագիրներից է:

Ա. Ղանալանյանի գիտական աշխատությունները նշանավորում են նոր կապ հայ բանագիտական մեթոդի զարգացման պատմության մեջ: Նրան է պատկանում սովետահայ բանագիտության սկզբնավորողի ու զարգացնողի պատվը: Գիտական գործունեությանը զուգընթաց, Ա. Ղանալանյանը 1934 թվականից մինչև 1951 թվականը ղապախոսել է նրանի պետական համալսարանում և Հայկական մանկավարժական ինստիտուտում, ստեղծելով հայ բանահյուսության մշակված դասընթաց: Նրա ուսանողներից և ասպիրանտներից շատերն այժմ հանրապետության նախնական գիտնականներ են: Ա. Ղանալանյանը հիմնադիրն է Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի բանահյուսության բաժնի, որն այժմ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ամենակարևոր սեկտորներից մեկն է:

Ա. Ղանալանյանի գիտական-մանկավարժական գործունեությունն ու հայագիտական վաստակը արժանացել են բարձր գնահատականի: 1951 թ. ՍՍՀՄ Գերագույն սովետը նրան պարգևատրել է «Պատվո նշան» շքանշանով, 1967 թ. նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում: Ավելի վաղ, 1935 թվականին, Ա. Ղանալանյանի «Հայ շինականի աշխատանքի երգեր» աշխատությունը արժանացել է Մեյլոնյան ֆոնդի մրցանակին, և այլն:

1965 թվականից Ա. Ղանալանյանը Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ է: Նա աչքի է ընկնում ոչ միայն գիտնականի իր մեծ Լուդիգիայով, այլև անսահման հոգատարությամբ դեպի երիտասարդ գիտնականները, սիրով դեպի հայրենի մշակույթը:

* * *

«Լուսիններ»-ի խմբագրությունը ցանկանում է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ Ա. Ղանալանյանին երկար տարիների գիտական-ստեղծագործական կյանքի փառս հայրենի գիտության ու մշակույթի: